ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ,,ԷՋՄԻԱԾԻՆ,, ԱՄՍԱԳՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1992

ՄԻ ԴԺԲԱԽՏ ,,ԹՈՒՂԹ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ,,

Վերջերս Մայր Աթոռ ստացուեց Յովհաննէս-Պետրոս կաթոլիկ հայոց սրբազան Պատրիարքի ,,Թուղթ շրջաբերական,,-ը ,,Վերադարձ Հայաստան,, վերնագրուած, 7 Յունիս 1992 թուակիր, Պատրիարք Հօր ստորագրութիւնը կրող:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը և մենք բոլորս այստեղ ծանր յուսախաբութիւն և ափսոսանք ապրեցինք ընթերցելով վերոյիշեալ փաստաթուղթը, որը նենգափոխումն է մեր Մայր Եկեղեցու մօտ երկհազարամեայ պատմութեան և վիրաւորանք հայ հաւատացեալ մեր ողջ ժողովրդի համար, նաև ժխտումն է արդի միջեկեղեցական էկումենիկ ոգու ու մի անխիղճ փորձ՝ մեր հայրենի այնքան տագնապալի այս ծանր օրերին քաղկեդոնական յիմար վէճեր յարուցելու Հայաստանում և նոր պառակտումներ ստեղծելու մեր ազգի ծոցում: Մեղք է մեր ժողովրդին:

Չենք ուզում հաւատալ, թէ բուն հեղինակը ինքը Յովհաննէս-Պետրոս Պատրիարքն է: Այո, կարծում ենք, թէ այս ,,Թուղթ շրջաբերական,,-ի հեղինակը կամ հեղինակներից մէկը Սեթեան կաթոլիկ եպիսկոպոսն է Միացեալ նահանգներից, որովհետև նա է, որ սրանից շուրջ տասը տարիներ առաջ մի երկարաշունչ յօդուած տպագրեց Վիեննայում գերմաներէն լեզուով, օտարներին ,,ապացուցելու,, համար, որ Հայ Առաքելական Եկեղեցին իր Սուրբ Էջմիածնի կենտրոնով՝ անվաւեր Եկեղեցի է, և որ պարզապէս անգէտ ժողովուրդն է համարում Սուրբ Էջմիածինը քրիստոնէական եկեղեցական օրինաւոր կենտրոն:

Մէջբերենք մի պարբերութիւն յիշեալ ,,Թուղթ շրջաբերական,,-ից, որը բնորոշում է և ճշտում հեղինակի տեսութիւնն ու նպատակը՝

,,Ինչպէս պատմութիւնը կը վկայէ, Հայոց Եկեղեցին ծնաւ որպէս անբաժան մէկ մասնիկը Քրիստոսի Տիեզերական Եկեղեցիին: Ան մինչև ն.-ող դար, ծլաւ ու ծաղկեցաւ Տիեզերական Եկեղեցիին հովանիին տակ, ուր մշակեց իր ուրոյն ծէսը, Գրականութիւնը եւ կանգնեց իր եկեղեցական կառոյցները: Սակայն Քաղկեդոնական պայքարը պառակտեց Հայոց Եկեղեցին, բաժանեց Քրիստոսի անձեռագործ պարեզօտը: Դաւանական հալածանքներու սաստկացումով՝ Հայ Կաթողիկէութիւնը տարտղնեցաւ, դարերու ընթացքին փոքրամասնութիւն մը դարձաւ, իր ներկայութիւնը միշտ պահպանելով հայրենի հողին վրայ...,,:

Անշուշտ ,,Տիեզերական Եկեղեցի,, ասելով՝ թղթի հեղինակը հասկանում է Կաթոլիկ Եկեղեցին, որ պատմական և այժմեան իրականութեան չի համապատասխանում:

digitised by A.R.A.R.@

Պատմականօրէն, առաջին դարերում, Ընդհանրական Եկեղեցի ասելով՝ հասկացւում էր համաքրիստոնէական հաւատի ու սիրոյ եղբայրութիւնը և համերաշխ գործակցութիւնը տարբեր եկեղեցական՝ իրարից անկախ Աթոռների /կենտրոնների/, առաքելական յաջորդականութեան հիման վրայ, ամէն մէկը իր եպիսկոպոս-հայրապետով, ինչպիսին էին, օրինակ՝ Անտիոքի, Ալեքսանդրիայ Հռոմի, Հայաստանի և այլ պատմական Աթոռներ: Յետագայում, 5-րդ դարից յետոյ է, որ տեղի ունեցան պառակտումները և հակամարտութիւնները Եկեղեցական կենտրոնների, որոնց ծանօթ պատմութիւնը տարածւում է աւելի քան հազար հինգ հարիւր տարիների վրայ:

Վերևում մէջբերուած պարբերութեամբ և մի քանի այլ հատուածներով, Յովհաննէս-Պետրոս Պատրիարքը պարզապէս թեթև գրչով անվաւեր և հերետիկոս է համարում Հայաստանեայց Եկեղեցին և աւելին՝ սեփականացնում է Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, Սուրբ Էջմիածինը և մեր Ոսկեդարը, իբրև Կաթոլիկ Եկեղեցուն վերաբերող սրբութիւններ և արժէքներ: Եւ ահա, նա այսպէս է հասկանում Կաթոլիկ Եկեղեցու ,,Վերադարձը Հայաստան,,: Պարզապէս ապշեցուցիչ է:

Մայր Հայրենիքում, ամէն օր, ամէն ժամ մեր պետութեան ու ժողովրդի ապրած այս ծանրածանր պայմաններում, երբեք սիրտ չունենք ,,բիւզանդական,, սին վէճերով զբաղուելու, սակայն յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան յայտարարում ենք, որ ստիպուած ենք պաշտպանելու մեր Մայր Եկեղեցին, մեր ազգային պատմական Եկեղեցին:

Խոր յուսախաբութիւն է ապրում մանաւանդ մեր ծերունազարդ Հայրապետը՝ Վազգէն Ա. Կաթողիկոսը, նա՝ որ իր ողջ կեանքում յարգանք է ունեցել և այժմ էլ ունի Հռոմէական Կաթոլիկ մեծ Եկեղեցու և Մխիթարեան հայրերի վաստակի նկատմամբ, նա՝ որ անցեալ տարի Հայաստանի խորհրդարանում ,,Խղճի ազատութեան,, օրէնքի քննարկման օրը իր ճառում, հայրական սիրով յայտարարեց՝ հայ կաթոլիկ եղբայրների կրօնական գործունէութեան իրաւունքը Հայաստանի մի քանի գիւղերում, ուր որոշ թուով հայեր իրենց կաթոլիկ են համարում, նա՝ որ յատուկ պաշտօնագրով իր ստորագրութեամբ 1990թ. Դեկտեմբերի 4-ին դիմեց Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մեծաւորին, առաջադրելով, որ Հայաստանում հայ կաթոլիկ համայնքները գործեն Մխիթարեան միաբանութեան խնամքի ու իրաւասութեան ներքոյ: Ահա մի հատուած այդ նամակից՝ ,,Այս կերպիւ Ձեր երազանքն ալ պիտի իրականանայ ,,Մխիթարեան ընկերութիւն,, մը ունենալու Հայաստանի մէջ: Մեր ջերմ ցանկութիւնն է, որ Հայաստանի հայ կաթոլիկ համայնքը օրինաւորապէս և մշտապէս կապուած մնայ Ս. Ղազարի Մխիթարեան ուխտին հետ և յետագային հոգևոր հովիւները ըլլան մեր միաբանութեան շարքերէն,,:

digitised by A.R.A.R.@

Այժմ, սակայն, իրօք մեծ է մեր բոլորի հիասթափութիւնը, որ Պէյրութի հայ կաթոլիկ պատրիարքութիւնը, չենք հասկանում ինչո՞ւ, փորձում է իր իշխանութեան ենթարկել Հայաստանի յիշեալ գիւղերի կաթոլիկ եկեղեցական համայնքները, առայժմ օգտագործելով երկու Մխիթարեան հոգևորականների, սակայն ինչպէս յստակ երևում է ,,թուղթ շրջաբերական,,-ից, ընդարձակ ծրագրումով կամենում է գրեթէ տէրն ու տիրակալը դառնալ Հայաստանի հայութեան, իր ,,տիեզերական Եկեղեցու իշխանութեան ներքոյ,,:

,,Վերադարձ Հայաստան,, նշանաբանով սանձազերծուած այս արշաւի փորձի դէմ, կարծում ենք, որ պէտք է իրենց յստակ խօսքը ասեն նաև Մխիթարեան մեր եղբայրները, որոնց իրաւասութիւնից խլւում է Հայաստանի հայ կաթոլիկ համայնքների հոգևոր հոգածութեան պարտականութիւնը:

Մենք, յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սրտագին կոչ ենք ուղղում մեր նորաստեղծ անկախ պետութեան մեզ հարազատ իշխանութիւններին և մեզ նոյնքան հարազատ ազգային քաղաքական կուսակցութիւններին, որոնք անմոռոգեշնչումով անցեալ տարի Սեպտեմբերի 21-ին անկախութեան պատմական հռչակումով հիմքերը հաստատեցին հայոց ազգային ազատ պետականութեան, որ նոյն ազգային անկախութեան ոգով, պաշտպան կանգնեն մեր բազմաշարչար պատմական ազգային Եկեղեցուն, որն իր բազմադարեան առաքելութեամբ ու իրագործումներով, եղել է և մնում է կրօնական մակարդակի վրայ՝ հոգևոր հիմքը մեր ազգային անկախութեան գաղափարախօսութեան:

Ինչպէս յայտարարեցին Օգոստոսի 30-ին իրենց հայրական խօսքով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ը և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Բ.-ը, թող լաւ իմանան բոլորը, որ՝

,,Հայաստանը նկատել որպէս քրիստոնէութեան քարոզչութեան համար բաց և խոպան դաշտ՝ ամէն բանից առաջ՝ նշանակում է մեղանչել ճշմարտութեան և իրականութեան դէմ: Առաւել ևս, սիրոյ, յարգանքի և ճանաչման թերացում է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու և լուսաւորչականունդ հայ ժողովրդի հանդէպ ... Քրիստոս գահակալում է այստեղ. Իր Իշման սուրբ Սեղանը որպէս սրբութիւն սրբոց ճառագայթում է այստեղից,,:

Եթէ Յովհաննէս-Պետրոս Պատրիարքի դժբախտ ,,Թուղթ շրջաբերական,,-ով հռչակուած հակապատմական և հակաէկումենիկ պարբերութիւնները պաշտօնապէս չեղեալ չհամարուեն, այդ դէպքում մնում է, որ Հայ Առաքել-

digitised by A.R.A.R.@

[illegible] Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ճշտեն իրենց վերաբերմունքը [illegible] Կաթոլիկ Եկեղեցու պատրիարքութեան նկատմամբ:

Ուշադիր լսենք մեծ առաքեալի պատուէրը՝ ,,Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք Քրիստոս,, /Գաղ. Գ. 26-28/: Ամէն:

«Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան թուի, այլ՝ տրտմութեան, բայց յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ կրթեցելոցն հատուցանէ յարդարութիւն»:

Եբրայեցւոց ԺԲ 11

Նարեկեան
Քրիստոսաբանութիւն

«Ըզզուարակդ պարարակի եզիանդ երկնայնոյ, որ է միածին Որդիդ քո օրհնեալ, իսկապէս մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրե՛ա. որ մատուցեալ միշտ եւ անպակաս մնայ ի լրութեան, յարակայ զենեալ ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ բոլոր յամենեսին եւ բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս եւ իսկութեամբ ի ստորինս. աննուազ մարդկութեամբ եւ անթերի աստուածութեամբ. փշրեալ եւ բաշխի ի մասունս անհատս. զի զհամայնն հաւասարեսցէ առ ի նոյն մարմին իւրումն գլխոյ»:

Նարեկ Խէ.- Գ

Միւռոնի մասին

Ժ.- Քանզի, ինչպէս ցորենին ալիւրը քու արարչական զօրութեամբդ մարմին ըրիր քեզի, իրապէս եւ ոչ ձեւապէս, ո՛վ օրհնաբանեալ Որդի Աստուծոյ, ու խաղողին արիւնը՝ կայլակ կողիդ, եւ ջուրը՝ արգանդ հոգեւոր ծննդեան, միեւնոյն կերպով ալ հոգին, զոր առաքեալներուն վրայ փչեցիր, ասով արդիւնագործեցիր:

Նարեկ ՂԳ
Թրգմ. Թ.Ե.Գ. (Ղե.-Ժ)

digitised by A.R.A.R.@